ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2020 թվականի N 111-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Համայնք Գետամեջ 11-րդ փողոց թիվ 51 այգետնակ հասցեում գտնվող Արամ Աշոտի Աղաբաբյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 22122014-07-0009/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 11-րդ փողոց N 21 այգետնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 11
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2020 թվականի N 112-Ա

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. 2020 թվականի նոյեմբերի 18-ին ժամը 11:30-ին հրավիրել Գետամեջ համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 13
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2020 թվականի N 113-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 18-ի N 36-Ա որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Եղիշե Սպարտակի Վարդանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող 0,085 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0202-0012) 5740 (հինգ հազար յոթ հարյուր քառասուն) դրամ արժեքով, ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Եղիշե Սպարտակի Վարդանյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով:
2. Օրենքով սահմանված կարգով քաղաքացի Եղիշե Սպարտակի Վարդանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում է գնորդի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Եղիշե Սպարտակի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 19
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2020 թվականի N 114-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջների և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 14-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. 2020 թվականի դեկտեմբերի 9-ին Գետամեջի համայնքապետարանի շենքում կազմակերպել հանրային քննարկում՝ համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 6-րդ հողամաս հասցեում պահեստի կառուցման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ (2-րդ փուլ):
2. Հաստատել համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 6-րդ հողամաս հասցեում պահեստի կառուցման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Անդրանիկի Սարգսյանին՝

1) Տալ հայտարարություն «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 6-րդ հողամաս հասցեում պահեստի կառուցման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկման հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 20
գ.Գետամեջ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետամեջ համայնքի ղեկավարի 2020 թվականի
նոյեմբերի 20-ի N 114-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2020 թվականի դեկտեմբերի 9-ին ժամը՝ 12:00-ին Գետամեջի համայնքապետարանի շենքում կկայանա հանրային բաց լսումներ՝ համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 6-րդ հողամաս հասցեում պահեստի կառուցման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ (2-րդ փուլ):

Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 115-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման կարգի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համարել փոփոխված Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0004-ից) 0,06147 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նշանակության այլ հողերից դարձնելով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման (տնամերձ) հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 26
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 116-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումով և N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30 և 48-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 115-Ա որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային սեփականություն հանդիսացող 0,06147 հեկտար մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0004-ից) ինքնակամ կառուցված 11,34 քառակուսի մետր մակերեսով ծածկոցի և 40,31 քառակուսի մետր մակերեսով պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0,06147 հեկտար մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0004-ից) ինքնակամ կառուցված 11,34 քառակուսի մետր մակերեսով ծածկոցը և 40,31 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինության հատակագծերի:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 1-ին փողոց N 34/3:

3. Դիմել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած անձին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 26
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 117-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Արմեն Ստեփանի Հարությունյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, կնքված՝ 2005 թվականի հոկտեմբերի 31-ին, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0045/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 39 այգետնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 26
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 118-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով Արմեն Ստեփանի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Արմեն Ստեփանի Հարությունյանին պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի N 39 հասցեի բնակելի կառուցապատման (այգեգործական) հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0045) 1987 թվականին ինքնակամ կառուցած այգետնակը՝ 233,49 քառակուսի մետր, ծածկոցը՝ 21,93 քառակուսի մետր արտաքին մակերեսներով, հենապատը՝ 17,51 քառակուսի մետր և պարիսպը՝ 2,91 քառակուսի մետր մակերեսներով քանի որ.

1) տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվական նոյեմբերի 26
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2020 թվականի N 119-Ա

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-025-0014-0045 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, նկատի ունենալով, Արմեն Հարությունյանին հատկացված հողամասից քարտեզագրման արդյունքում հաշվառված 0,0379 հեկտար ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, չի խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, ընդգրկված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողօգտագործողների պահպանության և անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Արմեն Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Արմեն Հարությունյանի սեփականության իրավունքը համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 39 հասցեում գտնվող, ըստ կադաստրային քարտեզագրման 07-025-0014-0045 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,0879 հեկտար հողամասի նկատմամբ, որը նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի նոյեմբերի 26
գ.Գետամեջ